

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ

Հ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տակավի՛ն հնագույն ժամանակներից ընտանիքի ստեղծմանը տրվում էր առանձին խորհրդավորություն: Հարսանիքները ուղեկցվում էին երգով, պարով, ծիսական ներկայացումներով: Ժամանակի ընթացքում որոշ սովորություններ վերանում էին, մտցվում նորերը: Մակայն հարսանեկան հանդեսի կայուն ավանդական համալիրը յուրաքանչյուր ժողովրդի մոտ պահպանվում է: Եվ պատահական չէ, որ մեդալների օտեղծման արշալույսից հարսանյաց հանդեսներում օգտագործվեց արվեստի այս ձևը ևս:

Երկրի քաղաքական, տնտեսական ծանր պայմանների հետևանքով Հայաստանում հիշատակային մեդալներն ընդհանրապես և հարսանեկանները՝ մասնավորապես ստեղծվեցին շատ ավելի ուշ, քան հայկական գաղթօջախներում:

Հայկական հարսանեկան առաջին մեդալները դրվագվել են Հոլանդիայում, շուրջ երկու հարյուր տարի առաջ¹: Հետաքրքրությունն այդ մեդալների նրկատմամբ սկսվեց XIX դ. 20-ական թվականներից, երբ հոլանդացի արվեստաբան Ապելը իր բազմահատոր աշխատության մեջ առաջին անգամ, առանց նկարադրության և բացատրության, ավեց հայատառ հարսանեկան մեդալի գրչանկարը, իսկ գիտական հոդվածներ լույս տեսան միայն վերջին տասնամյակում, որոնցով փաստորեն ակիզք դրվեց այդ մեդալների ուսումնասիրությանը: Այսպես՝ 1959 թ. Ի. Սպասկու հոդվածով գիտական շրջանառության մեջ դրվեց տակավին անհայտ ամուսնական մի մեդալ²: Այնուհետև, Հոլանդիայում լույս տեսան Վան դեր Մեյերի և Վան դեր Վոորտի հոդվածները, որոնք կարևոր են այս հուշարձանների ուսումնասիրման գործում³:

¹ J. Appel, Repertorium zur Münzkunde Mittelalters und der neuern Zeit, h. III, 2. Wien, 1824, էջ 1258, M. Brosset, Rapports sur un voyage Archéologique dans la Georgie et dans l'Arménie exécuté en 1847—1848. St. Petersbourg, 1850, էջ 15, J. Dirks, Penningkundig Repertorium, III. Leeuwerden, 1891, № 1112, էջ 206, M. Frédéric Macler, Médailles Arméniennes, Nouvelles Archives des Missions Scientifiques et Littéraires, t. XXII, Paris, MDCCC. XXIV, էջ 469—472; J. Schultman, Catalogus № 230, Verzameling A. O. van Kerkwijk, Amsterdam, 1958, № 1161, էջ 68; И. Спасский, Неизданная медаль Мартина Хольцхей с армянскими надписями («Сообщения ГЭ», XVI, Ленинград, 1959, стр. 59—61), G. van der Meer, Vier Armenische penningen, De Geuzenpenning Munt-en penningkundig nieuws, 1961, № 3, էջ 32, M. J. van der Voort, Armeense penningen, De Geuzenpenning Munt-en penningkundig nieuws, 1962, № 4, էջ 41—42: Г. Саркисян, Свадебные медали с армянскими надписями из собрания Эрмитажа («Сообщения ГЭ», XXXVII, Ленинград, 1973, стр. 74—77).

² И. Спасский, *Եղվ. աշխ.*, էջ 59—61.

³ G. van der Meer, *Եղվ. աշխ.*, էջ 32, M. J. van der Voort, *Եղվ. աշխ.*, էջ 41.

1973 թ. լույս տեսավ մեր հոգվածը, որտեղ ներկայացված մեդալներից երեքը հրատարակվում էր առաջին անգամ: Դրանցից մեկը իր պատկերներով և դրուժյուններով միանգամայն տարբերվում էր մինչ այդ հայտնի օրինակներից⁴:

Քննարկվող մեդալները հիմնականում ստեղծվել են հարսանյաց օրը նշելու, ինչպես նաև «ոսկյա» (ամուսնության 50 տարին) և «արծաթյա» (ամուսնության 25 տարին) հարսանիքների տոնակատարության առթիվ (արծաթյա հարսանիք վկայող մեդալներ դեռ չեն գտնվել):

Հայկական հարսանեկան առաջին ոսկյա մեդալի հեղինակն է հուլանդացի անվանի նկարիչ Մարտին Հոլցհեյը (1697—1764)⁵ (նկ. 1): Այս մեդալի (տրա-



նկ. 1

մագիծը՝ 50 մմ, քաշը՝ 34,04 գ) առաջին երեսին, զոհատեղանի աջ և ձախ կողմերում պատկերված են միմյանց ձեռք տեղմած նորապսակներ՝ ճառագայթներով լուսավորված: Ձախ կողմում՝ արմավենի, վերևի եզրում գրություն՝ ՍՈՒՐԲ. Ա[Մ]ՈՒՍՆՈՒԹԻ (սուրբ ամուսնություն): Ներքևի հորիզոնական գծի տակ նշված է հեղինակի անունը՝ M. HOLTZHEY FEC. (Մ. Հոլցհեյը սարքեց): Երկրորդ երեսին պատկերված է մի ձեռքում ջահ, մյուսում՝ բոցավառվող սիրտ բռնած թևավոր հրեշտակ: Սրա աջ կողմում խաղողի վազ է: Երկրորդ պլանի վրա՝ կարապետով լողավազան և սֆինքս, հետևում ծովի մականերեսին երևում են առագաստանավեր: Վերևի եզրագծով ունի գրություն՝ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻ ԱՍՏՅԻՆ (Նախատեսություն աստվածային)⁶:

Երկրորդ ոսկյա մեդալը պահվում է Զարեհ Պտուկյանի (Նյու-Յորք) մասնավոր հավաքածուում (տրամագիծը՝ 50 մմ, քաշը՝ 34,6 գ)⁷: Այս մեդալի եր-

⁴ Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 76:

⁵ И. Г. Спасский, նշվ. աշխ., էջ 59—61, — Е. Щукина, Художественная ме-
даль в Эрмитаже, Ленинград, 1961, стр. 35, Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 74:

⁶ Մեդալը պահվում է Լենինգրադի պետական էրմիտաժում, գույքամատյան № А 3 25119:

⁷ Armenian coins and medals. An exhibition from the collection of dr. Paul Z. Bedoukian. Museum of the diocese of the Armenian church of America, 1971.

րորդ օրինակը պղնձյա է, պահպանում է Վենետիկի Մխիթարյան միաբանության թանգարանում (տրամագիծը՝ 50 մմ)։

Բացառությամբ էրմիտաժի օրինակի, մյուս երկու մեդալները մեզ հայտնի են միայն լուսանկարներով, որի պատճառով հնարավոր չէ կնիքները համեմատել։ Հավանաբար դրանք դրվագված են միևնույն կնիքներով։

Մարտին Հուլյանը, ըստ երևույթին, ստեղծել է միայն մեկ հայատառ հարսանեկան մեդալ, որը պատվիրատուի խնդրանքով դրվագվել է ցանկացած մետաղից։ Այս մեդալների արծաթյա օրինակները, որոնք հավանաբար գոյություն ունեցել են, տակավին չեն հայտնաբերվել։

Մ. Հուլյանի գեղարվեստական արվեստանոցում սովորել և աշխատել է նրա որդին՝ Իոհան Գեորգ Հուլյանը (1729—1808), որի աշխատանքներից պահպանվել են համեմատաբար ավելի շատ օրինակներ։ Նրա դրվագած մեդալի առաջին երեսին պատկերված է երկու բոցավառվող սրտերով զարդարված զոհասեղան, իսկ աջ և ձախ կողմերում՝ նորապսակներ։ Վերևի եզրում փորագրված է՝ ՍՈՒՐԲ. ԱՄՈՒՍՆՈՒԹԻ (սուրբ ամուսնություն), հորիզոնական գծի տակ՝ ՅՈՒ. ՅԱՐՈՒԹ (մշտապես գոյություն ունենալ)՝⁸։

Ներքևի հորիզոնական գծի վրա գրված են հեղինակի անվան սկզբնատառերը և թվականը՝ I. G. H. F. 1749 (Իոհան Գեորգ Հուլյանը սարքեց)։ Երկրորդ երեսին արտկերված է զույգ աղավինիներով զարդարված սեղան և տղամարդու ու կնոջ միմյանց միացած, ճառագայթներով լուսավորված ձեռքեր։ Վերևում՝ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻ ԱՄԱՅԻՆ գրություն է, ներքևում, հորիզոնական գծի վրա՝ հեղինակի անվան սկզբնատառերը՝ I. G. H. F. 1749։ Այս նույն մեդալի մեկ այլ տարբերակի վրա բացակայում է «ՅՈՒ. ՅԱՐՈՒԹ» գրությունը, երրորդի վրա չկան Հուլյան-կրտսերի անվան սկզբնատառերը և հորիզոնական գծի տակի գրությունը (նկ. 2)։

XVIII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. սկզբները ընտանեկան-կենցաղային մեդալները Ամստերդամի հայ գաղթօջախում մեծ տարածում են գտել։ Այդ են վկայում մեդալների երկու երեսների կոմպոզիցիոն պատկերների պարզեցումը և համեմատաբար մեծ քանակությամբ օրինակների առկայությունը։ Քանի որ մենք հիմնականում օգտվել ենք ֆոտոպատճեններից, դրա համար էլ դժվար է որոշել կնիքների քանակը։ Այնուամենայնիվ, պահպանված օրինակներից կարելի է ենթադրել, որ այդ մեդալները դրվագվել են երեք տարբեր կնիքներով։ Հուլյան-կրտսերի մեդալները թողարկվել են ընդհանրապես հարսանյաց հանդեսի օրվա առթիվ. այդ մասին է վկայում երկրորդ երեսի հորիզոնական գծի տակ եղած ազատ տարածությունը։ Պահպանված օրինակներից մեկի

⁸ Մեդալի վրայի «ՅՈՒ» բառը սխալ է, պետք է լինի «ԳՈՒ», այսինքն «գոյություն, էակ» (Ա. Թ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. Ա, էջ 455)։

⁹ Այս մեդալները պահվում են հետևյալ թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում. ա) էրմիտաժում—2 մեդալ (1. ոսկյա, կախիկով, քաշը՝ 17,78 գ, տրամագիծը՝ 38 մմ), գույքատյան № А 3 1157; 2. ոսկյա կախիկով, քաշը՝ 17,42 գ, տրամագիծը՝ 39 մմ, գույքատյան № А 3 1158 (Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 74); բ) Վիեննայի Մխիթարյան միաբանության թանգարանում—1 (ոսկյա, տրամագիծը՝ 39 մմ), հրատարակվում է առաջին անգամ։ գ) 2. Պոտկյանի (Նյու-Յորք) մասնավոր հավաքածու—1 (ոսկյա, կախիկով, քաշը՝ 18,7 գ, տրամագիծը՝ 37 մմ), հրատարակվում է առաջին անգամ։ դ) Հաագայի մեդալների կաբինետում—1 (արծաթ, քաշը՝ 18 գ, տրամագիծը՝ 38 մմ)։ (M. F. MacIer, նշվ. աշխ., էջ 471)։



2



3




5





8

9



10

վրա (հավանաբար պատվիրատուի խնդրանքով) ավելացված է ամուսնացողի անուն, ազգանունը՝ MOSES BENIAT (Մոսես Բենիատ)¹⁰ (նկ. 3):

1847—48 թթ. Մ. Բրոսսեն Վրաստան և Հայաստան կատարած ուղևորության ժամանակ հայտնաբերել է հայկական գրություններով երկու հարսանեկան մեղալ¹¹: Նկարագրությունից ակնհայտ է, որ դրանցից մեկը նոր օրինակ է: Մեղալի երկու երեսների կոմպոզիցիոն պատկերները կրկնում են Հուլյհայ-կրտսերի կտոր մեղալները, սակայն տարբեր գրությամբ՝ «ՍՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻ» փոխարեն «ՍՐ ԱՐԱՔԻՆՈՒԹԻ» (սուրբ առաքինություն): Այդ գրությունը, ինչպես և նկարչի անվան սկզբնատառերը մնացել են Բրոսսեի համար անընթեռնելի և անվերծանելի¹²: Նա սխալ է մեկնաբանում նաև «ԳՈՒ. ՅԱՐՈՒԹԻ» գրությունը, ենթադրելով, որ այն նշանակում է «Հովհաննես կամ Հովսեփ-Հարություն»¹³, Իժմախտաբար Մ. Բրոսսեն չի բերում մեղալի լուսանկարը, իսկ այդպիսի օրինակ մինչ այժմ չի հայտնաբերվել:

Նույն ուղևորության ժամանակ Մ. Բրոսսեն, Թիֆլիսի գիմնազիաններից մեկի դիրեկտոր Մ. Ռոսկովչենկոյի մոտ հայտնաբերել է երկրորդ մեղալը, որը նույնպես նկարագրված է խիստ համառոտ, առանց լուսանկարի և չափազորման¹⁴: Այնպես որ սրա ձևը ևս անուշադրող էլ հնարավոր չէ: Մեղալը արծաթյա է, առաջին երեսի հորիզոնական գծի տակ եղած գրությունը հեղինակը կարդում է «ԳՈՒՅԱՐՈՒԹԻՅԻՆ»։ Այս մեղալը Բրոսսեն քննել է ավելի մանրամասն և պետք է ենթադրել, որ գրությունը ճիշտ է ընթերցված, Եթե այդպես է, ապա սա հարսանեկան մեղալի մի նոր տարբերակ է:

Այսպիսով, Հուլյհայ-կրտսերի ստորագրված մեղալները, հավանաբար, դրվագվել են շորս տարբեր կնիքներով:

Իոհան Հուլյհայի մեղալներից ուշագրավ է Զ. Պատուկյանի հավաքածուի ոսկյա օրինակներից մեկը (տրամագիծը՝ 37 մմ, բաշը՝ 15,7 գ), որն առանձնանում է իր ֆակտուրայով և կատարման տեխնիկայով: Սրա երկու երեսների պատկերները նույնությամբ կրկնում են վերը նկարագրված օրինակները, սակայն գրությունները սխալներով են: Հավանաբար սա ավելի ուշ շրջանի պատճեն է՝ դրվագված մասնավոր արհեստանոցում, գուցե և Հոլանդիայի սահմաններից դուրս: Գրության սխալից ակնհայտ է, որ վարպետը հայերեն չի իմացել և սոսկ ընդօրինակել է¹⁵ (նկ. 4):

Հարսանեկան մեղալների առանձին խումբ են կազմում փոքր ձվաձև օրինակները, որոնց երկու երեսների պատկերատիպերը նույնությամբ կրկնում են Հուլյհայ-կրտսերի վերը նշված մեղալների պատկերները: Սակայն վերջիններիս վրա բացակայում է հեղինակի ստորագրությունը: Այս մեղալների առաջին երեսին պատկերված է զոհասեղան, որի աջ ու ձախ կողմերում կանգնած են նորապսակները: Վերևի եզրով գրություն՝ «ՍՈՒՐՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՆ», ներքևում, հորիզոնական գծի տակ՝ «ԳՈՒՅԱՐՈՒԹԻՆ»: Երկրորդ երեսի վրա, զո-

¹⁰ Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 75:

¹¹ M. Brosset, նշվ. աշխ., էջ 15:

¹² Նույն տեղում, մեղալագործի անվան սկզբնատառը «H»-ի փոխարեն նա կարդացել է «R»:

¹³ M. Brosset, նշվ. աշխ., էջ 14:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Մեղալի վրա փորագրված է. Ա երես՝ «ՍՈՒՐՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻ: ՑՈՒ ՏՄՐՈՒԹ, Բ երես՝ ՆԱ-ԽԱՏԵՍՈՒ ԱՄՈՒՍԻՆ:



Նկ. 4

Հասնդանի վերևում պատկերված են երկու միմյանց սեղմած ձեռքեր և գրություն՝ «ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՄԱՅԻՆ»։ Հիշյալ մեդալներից մեկ հայտնի է միայն երեք օրինակ՝ մեկ արծաթյա և երկու պղնձյա։ Արծաթյա օրինակը¹⁶ (չափերը՝ 36×41 մմ, քաշը՝ 18,08 գ) առաջին անգամ հրատարակել է հոլանդացի հնասեր Վան դեր Վորտը¹⁷։ Պղնձյա օրինակներից մեկը (չափերը՝ 35×40 մմ) պահվում է Էրմիտաժում¹⁸, երկրորդը (չափերը՝ 36×40 մմ) գտնվում է Ե. Սիմոնյանի (Երևան) հավաքածուում¹⁹ (նկ. 5)։

Փոքր, ձվաձև մեդալները նույնպես դրվագված են հարսանյաց հանդեսների համար։ Թեև սրանց վրա նկարչի ստորագրությունը բացակայում է, սակայն երկու երեսների կոմպոզիցիոն պատկերների և ոճական լուծումների ընդհանրությունը հնարավորություն է ընձեռում դրանք վերագրել Իոհան Հոլցհայնին։ Հայտ երևույթին, այս մեդալները թողարկվել են XVIII դ. երկրորդ կեսին։ Միայն նոր օրինակների և գրավոր վկայությունների հայտնաբերումը կարող է ճշտել դրանց ստույգ թվագրությունը և այլ հարցեր՝ կապված նրանց ծագման ու տարածման հետ։

Պետական Էրմիտաժում²⁰ պահվում են երկու (ոսկյա և արծաթյա) մեծ, ձվաձև մեդալներ, որոնք իրենց պատկերատիպերով և գրություններով զգալիորեն տարբերվում են նախորդներից։

Ոսկյա մեդալի (չափերը՝ 47×52 մմ, քաշը՝ 132,45 գ) առաջին երեսին պատկերված է երկու այլովող սրտերով զարդարված զոհասեղան, աջ և ձախ կողմերում՝ միմյանց ձեռք սեղմած նորապսակներ, սրանց ոտքերի մոտ ծաղիկներով առատության եղջյուրներ և «ԳՈՒՅԱԹԻՆ» գրությամբ ժապավեն,

¹⁶ Մեդալը պահվում է Պետական Էրմիտաժում, գույքամատյան № ИМ 29418:

¹⁷ Van der Voort, նշվ. աշխ., էջ 41:

¹⁸ Գույքամատյան № 30450, հրատարակվում է առաջին անգամ:

¹⁹ Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 75:

²⁰ Գույքամատյան № АЗ 1156, Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 76:

գլխավորում՝ երկու թեթևոր հրեշտակ (այս մասը մաշված է)։ Վերևի եզրում դրվագված է՝ «ՍՈՒՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ» գրությունը, իսկ հորիզոնական գծի տակ, երկու տողով՝ «ԵՒ ԵՂԵՅԻՆ ԵՐԿՈՔԻՆ ԻՄԻ»։ Երկրորդ երեսին դրվագված է հավերժական կրակով զոհասեղան, իսկ վերևում՝ ձեռքեր։ Զոհասեղանի աջ և ձախ կողմերում ծաղկեղթաներով և ժապավեններով զարդարված կլոր պատվանդաններ են, որոնց վրա նշմարվում են գրության հետքեր²¹։



Նկ. 6



Նկ. 7

²¹ Մեդալը երկար ժամանակ օգտագործվել է իբրև զարդ, որի հետևանքով որոշ հատվածներ մաշվել են։ Դժբախտաբար, ամբողջովին մաշվել են պատվանդանների գրությունները, որոնց վերականգնումը ներկայումս անհնարին է։ Ձախ պատվանդանի վրա պահպանվել են գրության վերջին տառերը «—ԱՐԷ», աջում միայն սկզբնատառը՝ «Ե»։ Ամենայն հավանականությամբ, այստեղ դրվագված են նորապսակների անունները կամ ինչ-որ դարձվածք։

Պատվանդաններից մեկի վրա պատկերված են բոցավառվող երկու սիրտ, իսկ մյուսի վրա՝ զույգ աղավնիներ: Վերևում՝ ամենատեսա աչք, եզրերին դրու-
թյուն՝ «ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՄԱՅԻՆ»: Ներքևի հորիզոնական դժի տակ երկտող
գրություն է՝ «ԼԱԻ ԵՆ ԵՐԿՐ ԲԱՆ ԶՄԻ» (նկ. 6):

Մինչև վերջին ժամանակներս վերը նկարագրված ոսկյա մեդալը համար-
վում էր միակ օրինակը: Էրմիտաժի դրամագիտության բաժնի աշխատակից
Մ. Ա. Դոբրովոլսկայան 1973 թ. հայտնաբերեց այս մեդալի արծաթյա օրի-
նակը (չափերը՝ 45×55 մմ, քաշը՝ 23,78 գ), որը և հրատարակվում է առաջին
անգամ²² (նկ. 7):

Այս մեդալի երկու երեսների պատկերները և գրությունները գրեթե կրկ-
նում են վերը նկարագրած ոսկյա օրինակը: Արծաթյա մեդալի համեմատա-
բար լավ պահպանվածության շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել ոսկյա
օրինակի մաշված մասերը: Այսպես, առաջին երեսի վերևում դրվագված են
երկու թևավոր հրեշտակներ, որոնք նորապսակների գլխին պսակ են բռնել:
Տարբեր են նաև երկրորդ երեսի կտր պատվանդանների գրությունները, որոն-
ցից պահպանվել են՝ «... ԽՄ ԿԱՏԱՐ» (ձախ կողմ) և «Ե— — —» (աջ կողմ)²³:

Մեծ ձվաձև մեդալները իրենց պատկերների ռեալան առանձնահատկու-
թյուններով հարում են XVIII դ. ամատերդամյան մեդալագործների դպրոցին
և համարյա կրկնում են վերը քննարկված Իոհան Հոլցհայնի կլոր ու փոքր ձվա-
ձև մեդալների կոմպոզիցիոն պատկերները: Նկարիչը դրանք լրացրել է նոր
տարրերով, որոնք ոչ թե խախտել են ընդհանուր կոմպոզիցիոն լուծումը, այլ
ստեղծել ներդաշնակ մի ամբողջություն: Թեև մեդալների վրա բացակայում
է նկարչի ստորագրությունը, սակայն ակնհայտ է, որ վերջիններս դրվագվել
են Հոլցհայնների արվեստանոցում, երկու տարբեր կնիքներով և ժամանակա-
գրական առումով վերաբերում են XVIII դ. երկրորդ կեսին:

Ամատերդամի հայկական գաղթօջախում ստեղծված մեդալները բաժան-
վում են չորս խմբի և պատրաստվել են ոչ թե անհատական պատվերով, այլ
ընդհանրապես հարսանյաց հանդեսները նշելու համար, պատվիրատուի պա-
հանջած մետաղից: Այդ պատճառով էլ դրանք անխուսափելիորեն կրում են
միօրինակության կնիք: Այս առումով որոշակիորեն առանձնանում է Հոլցհայ-
նի վաղի ատեղծած մեդալը, ուր յուրաքանչյուր պատկեր ունի իր տրամաբա-
նական իմաստը (սիմվոլներով արտահայտված է նրա թողարկման նպատակն
ու նշանակությունը):

Հետագայում Հոլցհայն-կրտսերը բավական պարզեցրել է պատկերների
կոմպոզիցիան: Համարյա նույնությամբ պահպանելով մեդալի առաջին երեսը,
նա բոլորովին նոր մեկնարանությամբ է ներկայացրել երկրորդ երեսը, ավելի
դյուրին դարձնելով նրանց փորագրությունը, որպեսզի բավարարի բազմաթիվ
պատվիրատուների պահանջները: Անկասկած, պատրաստվել են նաև անհա-
տական պատվերներով մեդալներ: Սակայն դրանք քիչ են պահպանվել, որով-
հետև դրվագվելով խանկարժեք մետաղից մեկական օրինակ, ավելի շատ են
ենթարկվել ոչնչացման:

²² Մեդալը հրատարակության տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում
Մագդալինա Դոբրովոլսկային:

²³ Պահվում է Պետական էրմիտաժի դրամագիտության բաժնում (Դ. Գ. Բուրիլինի հավա-
քածու):

Հայկական հարսանեկան մեղալիներ դրվագվել են նաև այլ վայրերում, սակայն նրանց տեղայնացումը ներկայումս կարելի է որոշել միայն մոտավոր ճշտությամբ:

Պետական էրմիտաժում²⁴ պահվում է միակ թվագրված հարսանեկան ոսկյա մեղալը (տրամագիծը՝ 36 մմ, քաշը՝ 10,21 գ), որն առանձնանում է պատկերների ընդհանուր լուծումով: Սրա առաջին երեսին դրվագված են արծվակիր վահանին հենված նորապսակներ, վերևում՝ ամենատեսա աչք, որից ցած է սլանում աղավինի: Վերին մասը եզրափակված է «ՍՈՐՐ ԱՄՈՍՆԻԹՆ» գրութայամբ: Հորիզոնական գծի տակ զարդարանքներ են: Երկրորդ երեսին պատկերված են երկու առատության եղջյուրներ ծաղիկներով, որոնց մեջտեղում, ծաղկազարդ վահանի վրա՝ զույգ սիրամարգեր: Հորիզոնական գծի տակ նշված է՝ «1810»²⁵ (նկ. 8):

Վերը նկարագրված մեղալին, պատկերների ընդհանուր նմանությամբ, մոտ են երկու նոր, ոսկյա օրինակներ, որոնք հրատարակվում են առաջին անգամ: Չնայած մոտավոր նույնությանը, վերջիններս էապես տարբերվում են թվագրված մեղալից: Այսպես, առաջին երեսից բացակայում է ներքևի սլացող աղավինին: Երկրորդ երեսի վրա չկա թվական: Նորահայտ մեղալիների երկու երեսների պատկերները եզրափակված են կետավոր շրջանակներով²⁶ (նկ. 9): Երկու մեղալիներն էլ չունեն վարպետի ստորագրություն և թվական, որի պատճառով դժվար է որոշել պատրաստման ժամանակը:

Ի. Սպասսկին 1810 թ. մեղալը վերագրում է Լվովի հայ վարպետներին²⁷, Անկասկած, Լվովը. որպես հայ ոսկերչության կարևոր կենտրոններից մեկը, հայտնի է: Սակայն մեղալիների պատրաստման ստույգ տեղայնացումը մնում է տակավին անորոշ: Ըստ երևույթին, հիշյալ մեղալիները ստեղծվել են եվրոպական երկրների հայկական գաղթավայրերից մեկում՝ հայ վարպետի ձեռքով: Այդ են վկայում հայկական փոքրածավալ քանդակաքործական հուշարձաններից մեկ հայտնի այնպիսի տարածված պատկերներ, ինչպիսիք են՝ արծիվը, սիրամարգը, անմեղության ու հավատարմության խորհրդանիշ աղավինին և այլն: Մեղալի առաջին երեսի ներքև սլացող աղավինու պատկերը հայտնի է Կիլիկյան հայկական դրամներից՝ թողարկված Լևոն I (1198—1219 թթ.) օրոք²⁸:

Մեղալիներով նշվել են նաև «ոսկյա» և «արծաթյա» հարսանեկան հանդեսները: Մեզ հայտնի է Ապիկյան ընտանիքի «ոսկյա» հարսանիքի առթիվ պատվիրված մեղալը (տրամագիծը՝ 36 մմ)²⁹, Սրա առաջին երեսի վրա եզրով դրվագված է KEROVPE. DIROUHI. APIKIAN. «Քերովրե Տիրումի Ապիկյան» գրությունը: Կենտրոնում՝ NOCES D'OR «ոսկյա հարսանիք»:

²⁴ Գույքամատյան № А 3 49:

²⁵ И. Спасский, նշվ. աշխ., էջ 60, Г. Саркисян, նշվ. աշխ., էջ 77:

²⁶ Մեղալիներից մեկը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում (ոսկի, տրամագիծը՝ 40 մմ, քաշը՝ 12,0 գ. ունի կախիկ, գույքամատյան № 17730): Նույնանման երկրորդ օրինակը գտնվում է Բ. Ֆրանգյանի (Փարիզ) մոտ: Դեմրախտարար պր.-ն Բ. Ֆրանգյանը մեզ տրամադրեց միայն առաջին երեսի լուսանկարը: Այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ մեղալիները պատրաստված են նույն վարպետի արհեստանոցում:

²⁷ И. Спасский, նշվ. աշխ., էջ 61:

²⁸ Զ. Պոստոլյան, Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, տախ. 6, № 111:

²⁹ Մեղալը պահվում է Վիեննայի Միխիթարյան միաբանության թանգարանում:

երկրորդ երեսին թվականը՝ 2. JUILLET. 1843—1893 (2 հուլիս 1843—1893), Մեղալը պատվիրված է Քերովրե Շիշմանյանի և Տիրուհի Ազարյանի «ոսկյա» պսակի առթիվ, նրանց որդի՝ Հ. Դանիել Ապիկյանի (1852—1929) կողմից³⁰, Այն, ըստ երևույթին, դրվագվել է Ֆրանսիայում: Մեղ շհաշողվեց պարզել հեղինակի անունը: Հավանաբար պատրաստվել է մասնավոր արհեստանոցում, մեկ օրինակ:

1972 թ. Սովետական Հայաստանում ևս թողարկվեց հարսանեկան մեղալ (չափերը՝ 58×64 մմ), որի առաջին երեսին պատկերված է Կենաց ծառ, աջ և ձախ կողմերում՝ ողջ հասակով կանգնած նորապսակներ, Ձախ եզրում դրվագված է «ՄԻՐՈՒՆ ԵՎ ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» գրությունը: Մեղալի երկրորդ երեսի ամբողջ դաշտը զբաղեցնում է արևի խորհրդանիշը, որի միջին մասը ազատ է անուններ գրելու համար: Ձախ կողմում պատկերված է երեք վարդյակ³¹, նկարիչը առանձին նշանակություն է տվել նաև մեղալի ձևին, որը սիրտ է հիշեցնում (նկ. 10):

Այսպիսով, քննարկվող մեղալների մեծագույն մասը ստեղծվել է հայկական գաղթօջախներում: Հայ համայնքների քնակիչները ընդօրինակելով տեղացիներից այդ գեղեցիկ սովորույթը՝ հարսանեկան հանդեսները նշել մեղալներով, այն որպես ավանդույթ մտցրել են իրենց կենցաղի մեջ, տալով նրանց ազգային բնույթ ու երանգավորում: Մայր Հայաստանում ստեղծված մեղալները հանդիսանում են ավանդական այդ սովորության շարունակությունը:

АРМЯНСКИЕ СВАДЕБНЫЕ МЕДАЛИ

Г. В. САРҚИСЯН

Резюме

Наиболее ранние свадебные медали с армянскими надписями созданы в 30—40-ые гг. XVIII столетия в Голландии, художником-медальером Мартином Хольцхеем. Впоследствии медали с армянскими надписями создал его сын Иоганн Георг Хольцхей. К медалям И. Хольцхей тесно примыкают малые овалы, вычеканенные, очевидно, во второй половине XVIII в.

В Гос. Эрмитаже хранятся две большие овалы (золотая и серебряная). Серебряный экземпляр издается впервые. Эти медали также чеканились в Амстердаме и датируются второй половиной XVIII в.

Свадебные медали были изготовлены и в других армянских колониях. Однако малочисленность материала и отсутствие письменных сведений затрудняют локализацию этих памятников.

Медальями отмечались также «золотая» и «серебряная» свадьбы. Подобных медалей известно мало, поскольку они изготавливались в единичных экземплярах.

Выпуском свадебной медали в Советской Армении (1972 г.) была восстановлена эта своеобразная традиция прошлого.

³⁰ Մեղ անհայտ պատճառով Քերովրե Շիշմանյանի ազգանունը հետագայում դարձել է Ապիկյան: Այդ մասին մեղ տեղեկացրեց Հ. Օ. Սիրույանը (Վիեննա):

³¹ Մեղալը թողարկվել է Հայաստանի գեղարվեստական ֆոնդի կերպարվեստի կոմբինատում (ձուլվածք ճնշման տակ):